ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Արշալույս Տետեյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *Եվրոպական խորհրդարան, Հայոց ցեղասպանության ճանաչում, Եվրոպական միություն, Լեռնային Ղարաբաղի հիմնահարց, հայ-թուրքական հարաբերություններ, Թուրքիա, պատմության դասավանդում:*

ՄՈՒՏՔ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական միության (ԵՄ)[1] պատմությունը սկիզբ առավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, թեև եվրոպական երկրների միավորման գաղափարն ուներ դարերի պատմություն: Սակայն, եվրոպական երկրների միջև ընթացող հակամարտությունները և արյունահեղ պատերազմները, թույլ չէին տալիս կյանքի կոչել եվրոպական միասնության գաղափարը: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեց Եվրոպական միությունը՝ հիմնված պատմական հիշողության և ընդհանուր ժառանգության վրա:

Միևնույն ժամանակ ԵՄ երկրներից շատերը՝ մասնավորապես ոչ վաղ անցյալում Միությանը անդամակցած Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետությունները, տարիներ շարունակ ունեցել են տարբեր քաղաքական, գաղափարական համակարգեր, որոնք իրենց հետքն են թողել ազգային պատմության պատումների ձևավորման վրա: Շատ հաճախ այս կամ այն իրադարձության վերաբերյալ ԵՄ անդամ երկրներն ունեն հակադիր մեկնաբանություններ, որոնք դառնում են լուրջ տարաձայնությունների պատճառ:

Պատմության շուրջ բանավեճը վերջին տարիներին լուրջ խնդիր է դարձել ԵՄ-ի և Ռուսաստանի հարաբերություններում: 2019 թ. սեպտեմբերին Ռիբբենտրոպ-Մոլոտով պակտի 80-րդ տարելիցի կապակցությամբ Եվրոպական խորհրդարանի բանաձևի ընդունումից հետո ծավալվեց պատմությունը կեղծելու և վերաշարադրելու վերաբերյալ բանավեճ:

Պատմության շուրջ տարաձայնությունները հարթելու համար լուրջ քայլեր էին ձեռնարկվել 1990-ական թթ. Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կողմից: ԵԽ-ը ձեռնարկեց մի շարք նախաձեռնություններ՝ «Եվրոպայի պատմության դասավանդումն ու ուսումնասիրումը 20-րդ դարում» («Learning and teaching about the history of Europe of the 20th century»), «Եվրոպական ուղղությունը պատմության դասավանդման շրջանակներում 2002-2006 թթ.» («European Dimension in History Teaching»), «Ուրիշի (Օտարի) կերպարը պատմության դասավանդման համատեքստում 2006-2009 թթ.» («The Image of the Other in History Teaching»), «Համընդհանուր պատմություններ Եվրոպայի համար առանց բաժանարար գծերի 2010-2014 թթ.» («Shared histories for a Europe without dividing lines») և այլն: Այս նախաձեռնություններում առաջնայինը պատմության դասավանդման և պատմության դասագրքերի հարցն էր:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Դիտարկենք, թե հայոց պատմության երկու կարևորագույն հարցերը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները ինչպես են արտացոլվել Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված փաստաթղթերում:

** Հոդվածը ներկայացվել է 12.05.2020 թ., գրախոսվել՝ 04.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Եվրոպական միությունը հիմնադրվեց 1992 թ. նոյեմբերին ստորագրված Մաաստրիխտի պայմանագրով: Մինչ այդ եվրոպական միավորման գործընթացը անցել էր մի շարք փուլերով՝ 1951 թ. հիմնադրվել էր Ածխի և պողպատի եվրոպական միավորումը, 1957 թ. ստորագրվել էր Հռոմի պայմանագիրը, որով հիմնադրվել էր Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ), իսկ 1965 թ. ստորագրվել էր Միավորման պայմանագիրը (Merger Treaty):

Ինչպես գիտենք, Եվրոպական խորհրդարանը դեռևս 1987 թ. հունիսի 18-ին ընդունել էր «Հայկական հարցի քաղաքական լուծման» մասին բանաձև, որտեղ բարձրացրել էր մի քանի հարցադրումներ, որոնք հետագայում տեղ գտան այս կառույցի կողմից ընդունված մյուս փաստաթղթերում: Բանաձևում առաջին հերթին հղում էր կատարվում 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված ՄԱԿ-ի բանաձևին, ինչի հիման վրա հստակ նշվում էր, որ 1915-1917 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ: Բանաձևը նաև թուրքական իշխանություններին մատնանշում էր, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը, և միայն այդ դեպքում ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել Թուրքիայում[1]:

Կարևոր է նաև, որ Եվրոպական խորհրդարանը Հայոց ցեղասպանության ժխտումը համարում էր Թուրքիայի Եվրոպական տնտեսական համայնքին անդամակցության խոչընդոտներից մեկը՝ ինչպես Հունաստանի հետ ունեցած վիճելի հարցերը, Կիպրոսի հյուսիսային շրջանների օկուպացիան, քրդական խնդիրը, խորհրդարանական ժողովրդավարության բացակայությունը, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող վիճակը[2]: Կարելի է փաստել, որ 1987 թ. հունիսին ընդունված բանաձևում, ինչպես նաև հետագայում ընդունված փաստաթղթերում Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում էր Թուրքիայի ժողովրդավարացման համատեքստում՝ դառնալով յուրօրինակ փորձաքար ժողովրդավարություն արժեքներին իրենց նվիրվածության մասին պարբերաբար հայտարարող Թուրքիայի իշխանությունների համար: Փաստորեն, Եվրոպական խորհրդարանի՝ 1987 թ. ընդունված բանաձևը հստակ ընդգծում է այն հանգամանքը, որ ժխտողականությունը կարող է դիտվել իբրև խոչընդոտ: Միևնույն ժամանակ, հաճախ նշվում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ԵՄ-ին անդամակցության ճանապարհին խոչընդոտ չէ: 2005 թ. մայիսին ԵՄ-ում նախագահող Լյուքսեմբուրգի վարչապետ, հետագայում Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերը նշում էր, որ ԵՄ-ն չպետք է ներքաշվի Հայոց ցեղասպանություն ճանաչելու վերաբերյալ քննարկումներին՝ թողնելով այդ հարցը թուրքերին եւ հայերին[3]:

Հայտնի է, որ ԵՄ անդամակցության համար նախապայմանը համապատասխանությունն է Կոպենհագենյան չափանիշներին: Մասնավորապես չափանիշներից մեկը վերաբերում է ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը: Այսպես, Եվրոպական խորհրդարանի բանաձևերը բազմիցս ընդգծում են Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի ուղղակի կապը Թուրքիայում ժողովրդավարության և մարդու իրավունքների՝ մասնավորապես ազգային փոքրամասնությունների պաշտպանության խնդրի հետ: Հետևաբար, թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը անուղղակի կապվում է ԵՄ անդամակցության չափանիշներից մեկի ոչ լիարժեք իրագործման հետ:

Հետագայում Եվրոպական խորհրդարանը բազմիցս անդրադարձել է Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցին, ինչպես Թուրքիային, այնպես էլ Հայաստանին կամ Հարավային Կովկասում իր քաղաքականությանը նվիրված բանաձևերում: Մասնավորապես 2000 թ. նոյեմբերի 15-ին Եվրոպական խորհրդարանը ընդունեց բանաձև Թուրքիայի ԵՄ անդամակցության ճանապարհին ունեցած առաջընթացի վերաբերյալ, որտեղ մեկ անգամ ևս ընդգծվեց Հայոց ցեղասպանության խնդիրը՝ հետևյալ ձևակերպմամբ. «Եվրոպական խորհրդրանը կոչ է անում թուրքական կառավարությանը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովին աջակցել թուրքական հասարակության կարևոր մաս կազմող հայկական փոքրամասնությանը՝ մասնավորապես ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել ժամանակակից թուրքական պետության հիմնադրումից առաջ»[4]:

---

[1] *Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 18 հունիս 1987 թ., http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php (մուտք՝ 20.03.2020):*

[2] *Նույն տեղում:*

[3] *«Ցեղասպանության ճանաչման շուրջ քննարկումը պետք է թողնել թուրքերին և հայերին» Մայիս 27, 2005, https://www.azatutyun.am/a/1577088.html (մուտք՝ 15.04.2020)*

[4] *Turkey's progress towards accession, 15 November 2000, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/ getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P5-TA-2000-0511+0+DOC+XML+V0//EN&language=EN (մուտք՝ 20.03.2020):*

Այսպես, մեկ անգամ ևս ընդգծվում էր այս հարցը՝ որպես Թուրքիայի համար ժողովրդավարության և մասնավորապես ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցում կարևոր ցուցիչ:

Ինչպես հայտնի է, 2004 թ. դեկտեմբերին Եվրոպական խորհուրդը որոշեց մեկնարկել բանակցությունները Թուրքիայի հետ անդամակցության վերաբերյալ, որոնք պետք է մեկնարկեին 2005 թ. հոկտեմբերի 3-ին: Մինչ բանակցությունների մեկնարկը 2005 թ. սեպտեմբերին Եվրոպական խորհրդարանը ընդունեց բանակցություններ սկսելու մասին բանաձև, որտեղ մեկ անգամ ևս շեշտադրեց, որ դեռևս չեն իրականացվել 1987 թ. առաջ քաշված Հայկական հարցի հետ կապված խնդիրները[1]:

Սակայն, առավել ընդգրկուն է 2015 թ. ապրիլին Եվրոպական խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընդունված բանաձևը, որտեղ խորհրդարանը խորհուրդ էր տալիս Թուրքիայի իշխանություններին օգտագործել 100-րդ տարելիցը որպես հնարավորություն՝ ընդունել սեփական պատմությունը և ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բանաձևը ողջունում էր 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի պապ Ֆրանցիսկոս 1-ի ուղերձը: Ինչպես հայտնի է, Ս. Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ կատարված պատարագի ժամանակ Ֆրանցիսկոս 1-ը նշել էր, որ Հայոց ցեղասպանությունը XX դ. մարդկության վերապրած երեք ողբերգություններից առաջինն էր, որ «Թաքցնել կամ ժխտել չարիքը նշանակում է արնաքամ անել վերքը առանց վիրակապելու»[2]:

Պետք է նշել, որ 2009 թ. սեպտեմբերի 23-ը Եվրոպական խորհրդարանի կողմից հռչակվեց XX դ. երկու ողբերգությունների՝ ֆաշիզմի և ստալինիզմի զոհերի հիշատակի օր: Սակայն, այդպես էլ չսահմանվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, ինչը առաջ էր քաշվել և՛ 1987 թ. և՛ 2015 թ. բանաձևերում:

Իհարկե, այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի նաև Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) դերակատարությունը, որը Եվրոպական խորհրդարանի ամենամեծ խումբն էր: ԵԺԿ-ն 2015 թ. մարտին ընդունեց «Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» վերնագրով բանաձևը[3]: Վերջինիս ներկայացուցիչները, ովքեր զբաղեցնում են ԵՄ ղեկավար պաշտոններ Հայաստան կատարած այցերի ընթացքում եղել են նաև 1915 թ. Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրում, ինչպես Եվրոպական խորհրդի նախագահներ Հերման վան Ռոմպույը, Դոնալդ Տուսկը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոն, Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը:

Պետք է նշել, որ ԵՄ-ն հանդես էր գալիս որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ջատագով: 1987 թ. ընդունված բանաձևում նշվում էր, որ ԵՄ-ն պատրաստ է իրապես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին[4]: Հետագայում, Եվրոպական խորհրդարանը բազմիցս կոչ էր անում երկու երկրներին հիմնվելով եվրոպական ժողովուրդների հաշտեցման հաջողված փորձի վրա և գնալ հաշտեցման ճանապարհով: Կարելի է փաստել, որ 2000-ական թթ. հայ-թուրքական հարաբերություններում ձեռնարկված քայլերը մասամբ պայմանավորված էին եվրոպական ինտեգրման ճանապարհին թուրքական իշխանությունների հաջողություններ ունենալու ակնկալիքներով: Այս ընթացքում 2005 թ. ապրիլին Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի նախօրեին Թուրքիայի խորհրդարանում քննարկումներ կազմակերպվեցին «հայկական

---

[1] *European Parliament resolution on the opening of negotiations with Turkey, 28 September 2005, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&language=EN&reference=P6-TA-2005-0350 (մուտք՝ 05.04.2020):*

[2] *«Ցեղասպանությունը լռության մատնելը հանցակցություն է», http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20150414_7&flag=am (մուտք՝ 06.04.2020):*

[3] *The Armenian genocide and European Values resolution adopted by the EPP Political Assembly (3rd March 2015) https://www.epp.eu/papers/the-armenian-genocide-and-european-values/ (մուտք՝ 06.04.2020):*

[4] *Տե՛ս Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 18 հունիս 1987 թ., http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php (մուտք՝ 20.03.2020):*

պնդումների» վերաբերյալ[1]: Թուրքական մամուլը ողողվեց Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերով: Այս օրերին 2005 թ. ապրիլի 13-ին Թուրքիայի վարչապետը նամակը հղեց Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանին՝ «պատմական փաստերն ուսումնասիրելու նպատակով» ՀՀ-ի և Թուրքիայի խորհրդարանականներից ստեղծված հանձնաժողով ստեղծելու առաջարկով[2]:

ԵՄ-ի կողմից մեծ աջակցություն ստացան 2008 թ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը և Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումը 2009 թ. հոկտեմբերի 10-ին: ԵՄ-ն Կայունության գործիքի շրջանակներում իրականացրեց Հայաստանի և Թուրքիայի ութ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» նախաձեռնությանը[3]:

Սակայն, ինչպես նշում է պրոֆեսոր Միհրան Դաբաղը, հաշտեցումն առաջ էր քաշվում ճանաչման և վերաիմաստավորման փոխարեն[4]: Այստեղ խնդիրը ոչ թե երկու հակամարտող կողմերի խնդիր էր, այլ զոհեր և հանցագործների: Ավելի ճիշտկլիներ առաջնորդվել Գերմանիայի փորձով, ում կողմից կատարվեց սեփական անցյալի վերաիմաստավորում և հանցանքի գիտակցում[5]: Կարող ենք, փաստել, որ Եվրոպական միության կողմից առաջ քաշվող հաշտեցման գործընթացի համատեքստում ԵԽ-ի բանաձևերը մշտապես հիշեցնում են այս մասին:

Նշենք, որ Եվրոպական խորհրդարանը անդրադառնում էր նաև Թուրքիայում իրականացվող մշակութային քաղաքականությանը՝ մասնավորապես մշակութային արժեքների պահպանության հարցերին: 1987 թ. ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման» մասին բանաձևում նշվում էր, որ հուշարձանների պահպանությունը, այդ թվում նաև հայկական կրոնական ճարտարապետության պահպանումը պետք է թուրքական իշխանությունների ուշադրության կենտրոնում լինի: 2003 թ. հունիսին Եվրոպական խորհրդարանը ընդունած Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ բանաձևում, մեկ անգամ ևս կոչ էր անում թուրքական իշխանություններին հարգել և պահպանել հայկական և սիրիական մշակութային ժառանգությունը: Հետաքրքիր է, որ այս բանաձևում մտահոգություն էր արտահայտվում Թուրքիայի կրթության նախարարության հանձնարարականների կապակցությամբ, որոնք նպատակ ունեին տարրական և միջին դպրոցները ներգրավվել հայկական համայնքի դեմ ուղղված ժխտողականության գործընթացներում[6]:

Ինչ վերաբերում է մշակութային ժառանգությանը, նշենք, որ Եվրոպական խորհրդարանը 2006 թ. փետրվարին ընդունել էր մեկ այլ բանաձև՝ Ադրբեջանի մշակութային ժառանգության վերաբերյալ, որտեղ խստորեն դատապարտեց ադրբեջանական իշխանությունների կողմից տարիներ շարունակ Ջուղայի խաչքարերի ոչնչացմանն ուղղված քայլերը[7]:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ

Անդրադառնանք, թե ինչպես է արտացոլվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձևերում: Ինչպես հայտնի է, ԵՄ-ը հանդես է գալիս

---

[1] *Էրդողանը Քոչարյանին առաջարկում է «պատմական փաստերն ուսումնասիրող» հանձնաժողով ձեվավորել https://www.azg.am/index_wap.php?nl=am&id=2005041402&base_pub=0 (մուտք՝ 07.03.2020):*

[2] *Նույն տեղում:*

[3] *«Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի հանրային ներկայացում, http://eunewsletter.am/wp-content/uploads/2012/07/Press-Release_Public-Event-in-Yerevan_ARM_Final.pdf (մուտք՝ 08.04.2020):*

[4] *Տե՛ս Դաբաղ Մ., Հիշողությունը վտանգի մեջ է. Հայկական փորձը միջպետական նոր քաղաքականության համատեքստում, «21-րդ դար», 2011, թիվ 1 (35), էջ 25:*

[5] *Նույն տեղում:*

[6] *European Parliament resolution on Turkey's application for membership of the European Union (COM(2002) 700 – C5-0104/2003 – 2000/2014(COS)), https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P5-TA-2003-0265&language=EN (մուտք՝ 20.04.2020):*

[7] *European Parliament resolution on cultural heritage in Azerbaijan 16 February 2006, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P6-TA-2006-0069+0+DOC+XML+V0//EN (մուտք՝ 20.04.2020):*

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող գործընթացի աջակցությամբ: 2003 թ. հուլիսին նշանակված՝ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի առաքելությունն էր նպաստել հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Ադրբեջանական իշխանությունների կողմից հաճախ փորձեր են կատարվում ԵՄ-ի կողմից ընդունված փաստաթղթերում ներառել հակահայկական ձևակերպումներ: ԱԼԳ 2015 թ. մայիսին Ռիգայում կայացած գագաթնաժողովի ընթացքում Ադրբեջանը հրաժարվում էր ստորագրել համատեղ հռչակագիրը՝ Լեռնային Ղարաբաղի հետ կապված ձևակերպումների համար[1]: 2019 թ. մայիսին Բրյուսելում կայացած ԱԼԳ 10-ամյակի գագաթնաժողովի ավարտին չհաջողվեց ընդունել ամփոփիչ համատեղ հռչակագիր՝ դարձյալ Ադրբեջանի կողմից ստեղծած փակուղու պատճառով[2]: Ադրբեջանը փորձում է օգտագործել վերջին տարիներին ԵՄ-ում Հարավային գազային միջանցքի հետ կապված ակնկալիքները, հասնել իր համար ցանկալի արդյունքների:

1988 թ. հուլիսի 7-ի Եվրոպական խորհրդարանը ընդունել էր բանաձև, որտեղ խորհրդային իշխանություններին կոչ էր անում երաշխավորել Խորհրդային Ադրբեջանում ապրող 500.000 հայերի անվտանգությունը, պաշտպանում էր Հայաստանի հետ վերամիավորվելու արցախահայության պահանջը: Բացի այդ, խորհրդարանը դատապարտում էր Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված կոտորածը (massacre) և պահանջում էր պատժել մեղավորներին[3]: Երկու տարի անց՝ 1990 թ. հունվարի 18-ին, ընդունված բանաձևով Եվրոպական խորհրդարանը դատապարտեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերը (pogroms): Բանաձևում ընդգծվում էր Անդրկովկասում Վ. Լենինի և բոլշևիկյան կուսակցության կատարած տարածքային բաժանման և Լեռնային Ղարաբաղի բռնակցման հարցը[4]:

Հետագայում Եվրոպական խորհրդարանը ընդունել է մի շարք բանաձևեր. 1991 թ. մարտի 14-ին՝ Հայաստանի շրջափակման և մարդու իրավունքների դրության մասին[5], 1991 թ. մայիսի 16-ին՝ Հայաստանում և Ադրբեջանում իրավիճակի մասին, 1992 թ. փետրվարին՝ Լեռնային Ղարաբաղին օժանդակության վերաբերյալ[6] 1993 թ. հունվարի 21-ին՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը, 1999 թ. հունիսի 21-ին՝ Կովկասում խաղաղ գործընթացին աջակցության վերաբերյալ[7]:

Հետաքրքիր է նաև Եվրոպական խորհրդարանի Արտաքին գործերի անվտանգության և պաշտպանության քաղաքականության հանձնաժողովում 1996 թ. Էլեն Կարեր դ՛Անկոսի կողմից ներկայացված զեկույցը, որի հիման վրա 1997 թ. ընդունվեց նոր բանաձև: Այնտեղ կային մի քանի ձևակերպումներ, «Լեռնային Ղարաբաղի հարցը կապված է բոլշևիկյան ժամանակներում սահմանների վերաձևման հետ», «1920-1922 թթ. Ստալինի կողմից իրագործված ԽՍՀՄ տարածքային կազմակերպման արդյունք՝ հիմնված ազգային տարածքային միավորների ստեղծման վրա, որը պիտի նպաստեր ժողովուրդների տարանջատման գործոնների պահպանմանը»[8]:

---

[1] *Ադրբեջանի պատվիրակությունը հրաժարվում է ստորագրել ամփոփիչ հռչակագիրը. Շուլց https://168.am/2015/05/22/494126.html (մուտք՝ 20.04.2020):*

[2] *ЕС празднует десятилетие "Восточного партнерства" https://p.dw.com/p/3IPx4 (մուտք՝ 08.04.2020):*

[3] *European Parliament Resolution on the situation in Soviet Armenia, 7 July 1988, http://www.nkr.am/sites/default/files/1988_07_07_european_parliament_resolution_on_the_situation_in_soviet_armenia.pdf (մուտք՝ 11.04.2020):*

[4] *Resolution on the situation in Armenia, 18 January 1990, http://www.nkr.am/sites/default/files/europarl_ resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf (մուտք՝ 11.04.2020):*

[5] *Resolution on the blockade of Armenia and the human right situation there, http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_europarl_resolution_on_blockade_of_armenia.pdf (մուտք՝ 11.04.2020):*

[6] *Resolution on aid to Nagorno-Karabakh, 13 February 1992, http://www.nkr.am/sites/default/files/ 1992_02_13_ european_parliament_resolution_on_aid_to_nagorno_karabakh_b3-0155_92.pdf(մուտք՝ 11.04.2020):*

[7] *Resolution on support for the peace process in the Caucasus 21.06.1999, http://www.nkr.am/sites/default/files/1999_06_21_european_parliament_resolution_on_support_for_the_peace_process_in_the_caucasus.pdf(մուտք՝ 12.04.2020):*

[8] *Զեկուցագիր Եվրոպական միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների կարգացման վերաբերյալ, կեկուցող Էլեն Կարեր դ՛Անկոս, Եվրոպական խորհրդարան նաստաշրջանի փաստաթղթեր, Ե., 1997, էջ 12, 20:*

Սակայն, հետագայում Եվրոպական խորհրդարանի բանաձևերում այլևս պատմական ակնարկներ և անդրադարձեր տեղ չէին գտնում: ԵԽ-ի ընդունված բանաձևերում հիմնականում ընդգծվում էր ԵԱՀԿ Մինսկի խմբին աջակցության, ՄԱԿ-ի Կանոնադրության և Հելսինկյան Եզրափակիչ ակտի սկզբունքների համապատասխան տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի մասին[1], պատրաստակամություն հայտնում օժանդակել վստահության հաստատման միջոցառումներին ԵՄ-ի հիմնադրամների միջոցներով[2]:

Սակայն, ժամանակ առ ժամանակ խորհրդարանում ներկայացվել են կողմնակալ զեկույցներ և դրանց հիման վրա ընդունվել են բանաձևեր: Այսպես, 2004 թ. փետրվարին շրջանառության մեջ դրվեց Պեր Գարտոնի հեղինակած զեկույցը, սակայն բանաձևի վերջնական տարբերակից Եվրախորհրդարանում Եվրոպական ժողովրդական և Եվրոպական սոցիալիստներ կուսակցությունների աջակցությամբ հանվեցին հակասական և աչառու գնահատականներ պարունակող կետերը[3]:

Մեկ այլ աչառու և բացահայտ կողմնակալ զեկույց էր ներկայացրել Եվրոպական խորհրդարանի բուլղարացի պատգամավոր «Ադրբեջանի բարեկամներ» խմբի նախագահ Ե. Կիրլիովը 2010 թ. մայիսին, որտեղ տեղ էր գտել «ադրբեջանական օկուպացված» տարածքներից «հայկական ուժերը» դուրս բերելու վերաբերյալ կետ[4]: Այս ձևակերպումը կրկնվում էր նաև 2012 թ. ապրիլի 18-ին ընդունված՝ Ադրբեջանի և ԵՄ-ի միջև Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների վերաբերյալ ընդունված բանաձևում[5]: Սակայն, պետք է նշել, որ նույն խորհրդարանի կողմից ընդունված բանաձևերը փաստում են Ադրբեջանում տիրող ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի մասին: Օրինակ, 2012 թ. սեպտեմբերին Եվրոպական խորհրդարանը դատապարտեց ադրբեջանական իշխանությունների կողմից հայ սպայինին դաժանորեն սպանած Ռ. Սաֆարովի հերոսացմանն ուղղված քայլերը[6]: Մինչ այդ՝ 2012 թ. մայիսին, դատապարտվում էր մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակը, որը ակտիվացել էր եվրոպական հայտնի երաժշտական «Եվրատեսիլ» մրցույթի նախօրեին[7]:

Վերջին տարիներին արձանագրված դրական իրողություններից է 2014 թ. հոկտեմբերին Եվրոպական խորհրդարանում Հայաստանի եվրոպական բարեկամների աջակցությամբ Լեռնային Ղարաբաղի խմբի ստեղծումը[8]: Հետաքրքիր է նաև, 2019 թ. մարտին Եվրոպական խորհրդարանում հրավիրված «Հայատյացություն. պատմական և արդի դրսևորումները» թեմայով միջոցառման կազմակերպումը[9]:

---

[1] *A more effective EU policy for the South Caucasus 17 January 2008, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P6-TA-2008-0016+0+DOC+XML+V0//EN&language=EN (մուտք՝ 11.04.2020):*

[2] *Negotiations of the EU-Armenia Association Agreement 18 April 2012, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2012-128+0+DOC+XML+V0//EN (մուտք՝ 12.04.2020):*

[3] *Եվրախորհրդարանը վեկույցից հանում է «գրավյալ տարածքների» վերադարձի մասին կետը, https://www.azatutyun.am/a/1573165.html (մուտք՝ 12.04.2020):*

[4] *European Parliament resolution of 20 May 2010 on the need for an EU strategy for the South Caucasus (2009/2216(INI)), https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2011:161E:0136:0147:EN:PDF (մուտք՝ 12.04.2020):*

[5] *Negotiations of the EU-Azerbaijan Association Agreement 18 April 2012 – Strasbourg, https://www.europarl. europa.eu/sides/getDoc.do?reference=P7-TA-2012-0127&type=TA&language=EN&redirect (մուտք՝ 12.04.2020):*

[6] *Azerbaijan: the case of Ramil Safarov, 13 September 2012 -, Strasbourg, https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P7-TA-2012-0356&language=EN (11.04.2020):*

[7] *European Parliament resolution of 24 May 2012 on the human rights situation in Azerbaijan (2012/2654(RSP)), https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2012-0228+0+DOC+XML+V0//EN&language=EN (մուտք՝ 11.04.2020):*

[8] *Եվրախորհրդարանում ձևավորվել է Լեռնային Ղարաբաղի առաջին խումբը, https://artsakhpress.am/arm/news/6583/v-evroparlamente-sformirovana-pervaya-gruppa-po-nagornomu-karabakhu.html (մուտք՝ 11.04.2020):*

[9] *Եվրախորհրդարանում կանցկացվի հայատյացության թեմայով համաժողով. ելույթ կունենա նաև Արցախի ՄԻՊ-ը https://armenpress.am/arm/news/966004.html (մուտք՝ 15.04.2020):*

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տասնամյակներին Եվրոպական խորհրդարանի բանաձևերում բազմիցս արտացոլվել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Եթե Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Եվրոպական խորհրդարանը մշտապես կոչ է արել Թուրքիային առերեսվել սեփական պատմության հետ, ապա Լեռնային Ղարաբաղի հարցում ժամանակ առ ժամանակ տեղ են գտել կողմնակալ և աչառու գնահատականներ, որոնք ոչ միայն չեն նպաստում խաղաղության հաստատմանն ու պահպանմանը, այլև կարող են նպաստել ռազմատենչ հռետորաբանությունից ռազմական գործողությունների սկսմանը:

Аршалуйс Тетеян, ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА. В статье представлен анализ принятых Европейским парламентом нескольких резолюций, посвященных двум наиболее важным вопросам истории Армении - признанию Геноцида армян и проблеме Нагорного Карабаха. Вопрос признания Геноцида армян рассматривается в контексте вступления Турции в Евросоюз. Известно, что Европейский парламент осудил Геноцид армян в резолюциях, принятых в 1987, 2002, 2005, 2015 годах, и призвал турецкие власти признать и осудить первый геноцид XX века. В статье обсуждается влияние этих резолюций и позиции ЕС на нормализацию армяно-турецких отношений. В статье анализируются также резолюции Европейского парламента, в которых затрагивается проблема Нагорного Карабаха. В частности, Европейский парламент, начиная с 1988 года, принял документы, отражающие различные аспекты этой проблемы. В резолюциях, принятых в 1988 г. и 1990 г., Европейский парламент осудил погромы армянского населения в Сумгаите и Баку. В некоторых из этих документов представлены исторические аспекты Нагорно-Карабахской проблемы, в частности, политика советских властей в 1920-х годах..

Ключевые слова: *Европарламент, признание Геноцида армян, Европейский Союз, проблема Нагорного Карабаха, армяно-турецкие отношения, Турция, преподавание истории.*

Arshaluys Teteyan, RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT. The article is devoted to the analysis of several resolutions adopted by the European Parliament, which are devoted to the two most important issues in the history of Armenia - the recognition of the Armenian Genocide and the problem of Nagorno-Karabakh. The article considers the issue of recognition of the Armenian Genocide in the context of Turkey's accession to the European Union. It is known that the European Parliament condemned the Armenian Genocide in resolutions adopted in 1987, 2002, 2005, 2015 and called on the Turkish authorities to recognize and condemn the first genocide of the 20th century. The article also discusses how these resolutions, as well as the EU's position, have influenced the normalization of Armenian-Turkish relations. The article also analyzes the resolutions of the European Parliament, which address the issue of Nagorno-Karabakh. In particular, the European Parliament, since 1988, adopted documents reflecting various aspects of this problem. In the resolutions adopted in 1988 and 1990, the European Parliament condemned the pogroms of the Armenian population in Sumgait and Baku. Some of these documents present historical aspects of the Nagorno-Karabakh problem, in particular the policy of the Soviet authorities in the 1920s.

Key words: *European Parliament, recognition of the Armenian Genocide, European Union, Nagorno-Karabakh issue, Armenian-Turkish relations, Turkey, history teaching.*